Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմը, իր գործող երկու՝ Առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եւ Սուրբ էջմիածին եկեղեցիներով, հավուր պատշաճի իր մասնակցությունը բերեց 40-օրյա մանուկ Քրիստոսին Աստծուն նվիրելու առթիվ Տեառնընդառաջի տաղավարի տոնակատարությանը: Փետրվարի 13-ի երեկոյան կատարվեց նախատոնակի արարողություն, որի ժամանակ հայտարարվեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, փետրվարի 14 -ը հայտարարվել է նորապսակների եւ ընտանիքների օրհնության օր: Օրհնվեցին նորապսակ զույգերը, քարոզելով նրանց ստեղծել կայուն եւ ամուր ընտանիքներ, քանզի դա անհրաժեշտ է նախ իրենց եւ հետո՝ ազգին: Փետրվարի 14 – ին Թբիլիսիի եկեղեցիներում տոնի առիթով մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ

:

Այնուհետեւ Սուրբ էջմիածին եկեղեցու բակի մերձակայքում վառվեց ավանդական Տեառնը նդառաջի
խարույկը
,
որպես
Քրիստոսին
խորհրդանշող
լույս
եւ
նորապսակ
զույգերին
բաժանվեցին
նվերներ
: